

ւորն իսկ կորուզ է դարձեալ բան մի
տալ, եթէ ինքն քրիստոնեայ է : Վասն
զի այս իմաստով ամենայն միսթարու
թեամբ կորուզ ենք ասել, որ մարդիկ
ներէն ամենէն աղքատն դարձեալ այն
չափ հարուստ է, որ կորուզ է փոխ
տալ Յուստենակոնին : Կան աղքատ
ներ, կան թշուառներ, ոչ թէ միայն
այն պատճառաւ, որ մեզքն զմեզ թը
շուառացուցած է և աղքատացուցած,
այլ կան նաեւ աղքատներ, որպէս զի
մարդասիրութիւնն միջոցներ ունենայ
զարգանալու, որպէս զի ջրքնանայ,
չ, ներհէ անգործ : Այս տեղ է ահա
Աստուծոյ նախախնամութիւնն, որ
կամեցած է չարիքէն բարիք ծնուցա
նել : Ուրախանանք ուրեմն, որ մարդ
դասիրութիւնն աւելի եւ աւելի կը
դառնայ խոհմ և անաւստպիտական :
Պէտք է այսպէս լինիլ : Ուրախանանք,
որ Մարիամ վաճառէ իւր իւղն և ե
րեքհարիւր գէնար ստանայ : Բայց ու
րախանանք յաւէտ այն զգացման հա
մար, որ զՄարիամ կը մերձեցնէ յոտս
Յիսուսի Քրիստոսի և յոտս աղքատաց :
Ուրախանանք, որ կը սիրէ Մարիամ,
վասն զի առանց սիրոյ եթէ բոլոր ճո
խութիւնդ վատնես աղքատաց, ոչ
ինչ է : Հայցենք և խնդրենք, որ քրիս
տոնէական մարդասիրութեան սկզբ
բունքն, յորմէ կը ծնանին բազմութիւ
բ արեգործական հաստատութիւնք,
որ աւուր զորանայ և հաստատուի Ե
կեղեցւոյ և աշխարհի մէջ : Ազգանք
և ազգութիւնք, որպէս զի ջրատկարկիք
և ջրդատապարտուիք որ մի տեսնել,
որ կենաց շունչն հեռանալով սոյն ման
րակրկիտ և հաշուազէտ մարդասիրու
թեան գրութենէն, միայն նախնի մար
դասիրութեան ձեւն ու կեղեւն մնայ
աշխարհի վերայ : Ազգութիւնք, որպէս
զի ճշմարիտ սէրն, աստուածահաճոյ
սէրն, որ աւուր աւելի ոգեւորէ, ա

ւելի կենդանացնէ այն գործերն, որոց
վերայ կը զարմանանք : Ազգութիւնք մա
նաւանդ, որ Յիսուս Քրիստոս աւելի
ճանաչուի, նորա սէրն աւելի զգա
ուի, նորա գործն լիովին ընդունուի
և հասկացուի : Վասն զի սորա մէջ
կը կայանայ արտերու վերականգանու
թիւնն եւ աշխարհի վերանորոգու
թիւնն :

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԻՉՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԻՉՆԵՐՈՒ ՎԵ
րայ շատ անգամ շատ բաներ գրուած
են, բայց սոյնպիսի գրուածոց մէջ ա
մենէն նշանաւորն է բազմահմուտ
գիտնական բժշկապետ Գէորգ Լիւ
վերդեանի աշխատասիրութիւնն, որ,
ՍՍՅԱԹ-ՆՈՎԱՅ ԵՐԳԻՉ ԵՐԳՈՅ ԿԱՊՈԳ
րութեամբ (Սոփիա, 1852) և ԼՂԳԱՅ
ին Երգչաց վերայ արած հասուն խոր
հրդածութիւն, անմահացուցած է ոչ
միայն նոյն երգչաց, այլ և իւր անու
նըն իսկ իւր մահէն զինի : Ով որ կար
դացած է ՍՍՅԱԹ-ՆՈՎԱՅ, տեսած
է ակներեւ, որ արժանայիշատակ Լիւ
վերդեանն իւր մեծ պաշտօնին մէջ
(վասն զի բժշկապետութենէն զատ՝
յատուկ պաշտօնատար էր Կաթիլատու
Փոխարքային մօտ) առաջին հայազ
գին եղած է, որ Հայ ժողովրդեան
կեանքն ու կենցաղն, լեզուն ու պատ
մութիւնն նոյն իսկ ժողովրդի ծոցին
մէջ որսնած է և հարցասիրած, Լու
նէր, Լուծներ, Վիճախիաղէր, ԼՂԳԱՅԻՆ
ԵՐԳԻՉՆԵՐՈՒ կամ ԼՂԵՂԵՐՈՒ ԵՐԳԻՉ

ժողովելով եւ քննելով: Գ. Միսիւր-
դեանն (որոյ օրինակելի կենսագրու-
թիւնն թերեւս յաջողմբ օր մի հրա-
տարակել) ՍԱՅԱԹ - ՆԱՎԱՅԻ րն
դարձակ Յաւաջ օրանին մէջ այնպիսի
մեծ նշանակութիւն տուած է Մարտի-
նի Վառձներուն եւ ժողովրդային Նրդ-
չոյ երգերուն եւ այնպէս մանրամու-
տիւ զննած է ժողովրդի կենդանու-
թեան երակներն, որ ամենայն իրա-
ւամբ հայկական ներկայ Ռանասիրու-
թեան հայր կարող է համարուիլ: Սեբ
որ ըստ ամենայնի համակիր եմք Գ.
Միսիւրդեանի համազումներուն եւ ի
տրտէ կը փափագիմք, որ մեր Ռանա-
նասերներն երեւակայութեան հորի-
զոնէն իջնելով՝ բուն ժողովրդի մէջ,
իրականութեան մէջ, հարցասիրեն
ժողովրդի կեանքն, նորա առածներու
մէջ քննեն նորա իմաստութիւնն, նո-
րա երգերու մէջ՝ նորա վիշտն ու մը-
խիթարութիւնն, նորա ճաշակն ու
բանաստեղծութիւն, նորա բարբառ-
ներուն մէջ՝ նորա բնիկ արտաբերու-
թիւնն ու օտար ազդեցութիւնէ կը
բաժ տպուորութիւններն, մեք կը
փափագիմք, որ ժողովրդային երգերն
աւանդութիւններն, առածներն եւ
ալն, ինչ որ լինին, ինչպէս եւ ինչ բար-
բառով որ լինին, անպատճառ նոյ-
նութեամբ հրատարակուին, իրեւ
նիւթ ազգային կենաց ուսումնասի-
րութեան:

Մյայտատարաւ ահա արժան կը

համարիմք մեր Հնդկաբնակ Համազ-
դիներէն Սեփարոյ Նսայի Սանուկեա-
նի օրինակած եւ տեղւոյն Մայրու-
րէր. Ներսէս Օ. փարգապետի ձե-
ռամբ խմբագրութեանս յանձնուած՝
ժողովրդային երգոց հաւաքածոյ փոք-
րիկ տետրակէն առ այժմ երկու հա-
տըն հրատարակել Սիօնի միջոցաւ,
անհասկանալի բառերն եւս համառօ-
տիւ բացատրելով: Նրդերն Սուղայի
հայկական բարբառով են եւ Նրդիչնե-
րն Սուղայիցի, եւ մեր միւս ազգայ-
ին երգչաց շատերուն նման սոցա ա-
նունն եւս բուն երգչական անունն է
-Վուլ-Նիսիւր եւ Վուլ-Նիսիւրի:
Վուլ ծառայ կը նշանակէ, Նիսիւր ան-
հասկանալի է, իսկ Նիսիւր-նի, որ Նիսիւր
բառէն է, կը նշանակէ՝ փափագ, խոր-
դրուածք, սէր. հետեւապէս Վուլ-
-Նիսիւր-նի կը նշանակէ ծառայ սիրոյ,
ծառայ խնդրուածոց:

Մհա երգիչներ, որ ծառայ համա-
րած են իրենց անձն, ծառայ ժողովրդ-
դի առջեւ երգելով, ծառայ սէր եւ
վիշտ նուագելով, ծառայ խրատներ
եւ յորդորներ տալով իրենց բնա-
րուեալ քնարով:

Նրդեր քանի քանի այսպիսի եր-
գասաց եւ քնարահար ծառաներ ե-
ղած են, որոց երգերն, առանց թղթի
երես տեսնելու, ժողովրդեան մէջ
երգուեր, երգուեր լսերն, առանց ի-
րենց հարձագանքն անգամ յետագայ-
ից հասնելու: